

որ եկեղեցական հսութիւնները մեզանում մեծ զգուշութեամբ պահպանուին և այդ բանին յատկացուին յարմարաւոր և ապահով խորաններ, որպէս զի ապահով լինին ամեն որբութիւն մոռացած աւազակների ախորժակից աւազակների, որոնք տարաբաղդաբար մեր և մեր ժամանակի ծնունդն են:

ԿԸԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Արարատի ընթերցողներին արդէն յայտնի է, որ Ֆրանսիայում անցեալ տարուանից կառավարութիւնը խիստ միջոցների գիմեց միարանական դպրոցների դէմ, շատ միարանութիւններ, որոնք օրինական ձևով գոյութիւն չէին առել, ցըռեցան և ահազին թուով դպրոցներ փակուեցան, որոնց ուղղութիւնը վնասակար ճանաչուեց հասարակապետութեան շահերին: Թէև այս հալածանքը սկիզբ առաւ գեռ հանդուցեալ Լեռն XIII Պապի կենդանութեան ժամանակ, բայց երբէք այն չափերի ըր հասաւ և այնպիսի սուր կերպարանք չըստացաւ, ինչպէս այժմ:

Պապականութիւնը՝ բացի անսխալականութիւն հրատարակելուց, բացի պապերին Քրիստոսի փոխանորդ համարելուց երկրիս վերայ, միշտ ձգտել է անկախ և բարձր լինել աշխարհի եշխաններից և տիրել ու սարկացնել նրանց պատական հեղենակութեան առաջ:

Կազ Ժամանակ, երբ պապերին յաջողուեց իրենց փառասիրութեան իրագործումը և նրանք աներկիւդ կերպով բանադրելով գերմանական, ֆրանսիական, իսպանական և այլ երկրների թագաւորներին և իշխաններին, հարկադրում էին շտապել Հռովմ, շաբաթներով ստաբորիկ կանգնել Վատիկանի դռներին և երկար ամրաշխարանքից ու պապի հողաթափն համբուրելուց յետոյ միայն, վերստանալ երենց իշխանութիւնը երկրիս վրայ Աստուծոյ անսխալական փոխանորդից և վերադառնալ իրենց Երկիրները:

Գլխաւորապէս իշխելու տենչանքով էին յայտարարուած խաչակիրների արշաւանքները միջին գարերում, նոյն նպատակաւ ոահմանուեց ինկուիզիցիան և նրա խիստ գրաքննութիւնը և Աւետարանի սպասաւորները միմիայն փառասիրութեան հա-

մարդկան մտքի գարեաի ընթացքում կուիւ մզում մարդկային մտքի վերածնութեան գինուորների գէմ՝ խարոյկների վրայ այսելով ըստսութելով և հերկաթիրոյ յայտարարելով նրանց։ Պատրական նութեան աշխարհապետական—իշխանափական ազգպետէ ձրգուումներին առաջին ամենամեծ հարուած հացը եց հաւագուէն։ I 18-րդ գարու վերջին և սատնելիներորդի սկզբին, իսկ վերջին հարուածը տեղի ունեցաւ նտալիայի ազատութիւնից յետոյ 19-րդ գարու առաջին կետին, երբ պապերից ելուեց Հռովմը և նրանք իրենց Վատիկանի գերեալներ յայտարարեցին, մերժելով կառավարութեան կողմից պապական իշխանութեան համար որոշուած տարեկան միջինաւոր առութքը։ Այս հարուածը պապերի աշխարհային իշխանութեան գէմ էր ուղղուած։ Այժմ Առուէի նախագահութեան և Կոմիտ մինիստրութեան ժամանակ պապականութիւնը հարուած է ստանում ունեցած բարոյական ազգեցութեան գէմ։

Հանգուցեալ Առու XIII պապը չը հաշտուելով պապական երկրի խառալական թագաւորութեան ենթարկելու գործողութեան հետ կարողանում էր լաւ յարաբերութիւններ պահպանել կաթոլիկ երկինքների հետ և թոյլ չէր տուիս, որ այդ երկիրների պետերը այցելութիւններ տային նտալիայի թագաւորներին Հռովմը քաղաքում և այդպիսով պապին անհաճոյ գրութեան գոյութիւնն ու օրինականութիւնը ճանաչէն։ Հանգուցեալ պապը, թէև տեսնում էր Ֆրանսիայում կաթոլիկութեան գէմ մզուած հալածանքը չը հաւատացողների և մատոնների կողմից, բայց այնուամենայնիւ լաւ յարաբերութիւն էր պահպանում կառավարութեան հետ և Ֆրանսիայի կողմից հղօր աջակցութիւն գտնում կաթոլիկ եկեղեցու շահերի պաշտպանութեան խնդրում հեռաւոր և մերձաւոր Արևելքում։

Պիոս X պապը սկզբներում աշխատում էր լաւ յարաբերութիւն պահպանել ֆրանսիական կառավարութեան հետ նոյն իսկ այն ժամանակ, երբ պետական հիմնարկութիւններից դուրս ենթին իրկանական խաչը հէնց աւագ շարաթուայ ընթացքում։ Մինչդեռ այդ հանգամանքը ներկայ պապին առիթ չեղաւ ըուղոր բարձրացնելու այդպիսի վարժունքի գէմ, մի ուրիշ գէպը, որը աննպաստ էր նրա աշխարհատիրական ձգառւմներին և օրինաւոր էր ճանաչում ու յայտարարում նտալիայի թագաւորների տիրապետութիւնը Հռովմի վրայ, առիթ եղաւ շատ սուր և պապականութեան համար անախորժ գէպքերի։ Այս տարի երբ Ֆրանսիական հասարակապետութեան նախագահ Առուէին այցելութեան եկաւ կտալական թագաւորին, Պապը


վիրաւոքուեց այդ հանգամանքից և իւր քարտուղասի միջացաւ դժգոհութիւն յացանեց զբանիկական կառավագութեան նկր և կայացուցչին; Ֆլանսիական կառավագութիւնն էլ պարագան չը մնաց այդպիսի քայլի դէմ և անմիջապէս հետ կանչելով Վատիկանում նշանակած ֆրանսիական պետականին, Փարիզի կաթոլիկ եպիսկոպոսին (պատի ներկայացուցչին) անմիջապէս վերադարձրեց յանձնարարական բոլոր թղթերն և այդպիսով Վատիկանի և ֆրանսիական հասարակագետութեան յաջարեց բութիւնները խզուած յայտաբարուեցին:

Պալը ֆրանսիայի պաշտպանութեան և հաշտութեան մաշնին յոյսը կտրած, այժմս պաշտպանութիւն է սրոնում ըստ քական Գերմանիայում և աշխատում է հաշտուել իտալական կառավագութեան հետ, մինչդեռ հէնց նրա պատճառով խովհուեց ֆրանսիական կառավարութեան հետ:

Ցաւալի երեսյթ է, որ մինչև այժմս էլ եկեղեցին չը հասկացաւ Աւետարանի դժած շաւիդը և փոխանակ սիրոյ քարոզ և ընդհանուր եղբայրութիւն հաստատող կապ լինելու, մի տեղ հանդէս է դալիս իշխանասիրական ձգտումներով և ուզում է տիրել, իսկ մի ուրիշ տեղ գործիք է դառնում հզօնների ձեռքին այս կամ այն քաղաքական անարդար նպատակներին և ազգեցութեանը ծառայելու, ինչպէս որ անում է նոյն կաթոլիկ եկեղեցին յօդուտ Գերմանական՝ ազգեցութեան մերձաւոր Արևելքում:

«Osservatore Romano» թերթում հաղորդում են Պապի աւագքարտուղար Մերի—դէլ—վալի կարդինալի ըացատաւութիւնը Վատիկանի ֆրանսիական դեսպան Նիզարի հետ, ուի հետեւանը եղաւ—ֆրանսիական կառավարութեան և Վատիկանի քաղաքական յարաբեցութեանց ընդհատումը: Երբ Նիզարը դիմեց կարդինալին՝ հարցնելով, թէ արդեօք ուղիղ է ա, դահի կողմեց կառավարութիւններին սւլտանիած (նօտա), ուղոքագրի քոյլանդակութիւնը լրագիրներում հրատարակածի հետ և արգեօք ճշշտ է այն պարսերութիւնը, որ միայն խիստ յարդելի պատճառուներով յետ չը կանչուեց պատական տեղապահը Փարիզից», Մերի—դէլ—վալը չը հրաժարուեց պատասխանել, այլ միայն խնդրեց, որ յիշեալ հարցերն իրեն գրաւոր տրուին՝ խոստանալով պատասխանել մէկ կամ նոյն իսկ կէս ժամ՝ յետոյ: Բայց որովհետեւ զեսպանը անմիջական քանաւոր պատասխան էր խնդրում, ուստի յիշեալ քացարութիւնը ոքոշ եկրակացու-

թեան չը հասցըեց և նիզարը հետեւեալ օրը յայտնեց, որ ինքը հրաման է ստացել Հռոմից հեռանալու և մինչեւ Դը—նաւէնի դալը գեղապանատան գործերը կը վարի քարտուղար կոմո զը Կուրսելը: Նկարագըելով գործի ընթացքը, պապական օրդանը նկատում է, որ պահանջել օտար տէրութիւններին ուղարկած (Խօտայի) բողոքագրի բովանդակութիւնը միանգամայն ապօ-ընի է և հակասում է դիպլոմատիական բոլոր ընդունուած սո-վորութիւններին, որովհետեւ կօլլէկտիւ բողոքագրի մէջ փոփո-խութիւններ անելը ոչ մի օրէնքով արգելուած չեւ և պապի տեղապահն վերաբերեալ պարբերութեան մէջ, որը Փրան-սիական կառավարութեան կողմից վերաւորական համարուեց, լրագիրն ընդհակառակն նկատում է պապական աթոռի կող-մից առանձին ուշադրութիւն դէպի Ֆրանսիան, որովհետեւ Վատիկանը Ֆրանսիայի դէմ այն միջոցի չը դիմեց, ինչի որ կը գիմէր ուրիշների վերաբերութեամբ:



ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԼՈՒՍԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ե.

ԽԱՂԵՐԻ ԶՈՐԳԱՑՈՒՄԸ

Կազմութեան նայելով՝ պէտք է տարբերել հիմնա-
կան խաղն իւր զարգացումից:

Հիմնական խաղերն են խկաղէս մի անդամից, մի
բերմամբ յօրինուածները. զարդացած խաղերը ժամանակի
ընթացքում առաջացած են հիմնականներից՝ իբրև տար-
րական մասերից:

Այս զարդացումը լինում է կցմամբ և աճմամբ:

Երկու հիմնական երկեակներ, որոնք իրարուց անկախ
են և անջատ ևս երգում են, կցուելով իրար՝ կազմում
են մի քառեակ և միասին առնւում իրեւ մի քաղա-